ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/5» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ (ԲՄ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 22.01.2019թ.
ժամը 11[10]

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետի տեղակալ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան,

Գնահատողներ՝

ՀՀ ՋՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության պետ, գնդապետ Կ. Մխիթարյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Գ. Ռիստյան,

ՀՀ ՋՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության 1-ին բաժնի պետ, գնդապետ Ա. Մկրտչյան:

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀՇ 2-րդ դասի առաջատար ծառայող Գ.Գևորգյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/5» ծածկագրով ԲՄ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Գևորգյան)

1. Մասնակիցների՝ ԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության և դրանց ԲՄ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության, դրանց ԲՄ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Գ. Գևորգյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/5» ծածկագրով ԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին մասնակիցների համապատասխանությունը հավաստող փաստաթղթերն առկա են և համապատասխանում են ԲՄ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ի, որի կողմից ներկայացված փաստաթղթերի և ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերի միջև առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ի կողմից Հավելված 6.1-ով ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերում նշված է «արտադրող կազմակերպության կողմից տրված ապրանքատեսակի անձնագիր», այնինչ ընթացակարգի հրավերով պահանջվում է «արտադրող գործարանի որակի անձնագիր»: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը, գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և 24.01.2019թ. մասնակցին ծանուցել անհամապատասխանության շտկման վերաբերյալ: Մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը, և 29.01.2019թ. նիստը շարունակվել է:

Քանի որ 21.01.2019թ. ստացված ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, հանձնաժողովը որոշեց մասնակիցների ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող:

1.2 29.01.2019թ., հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից 24.01.2019թ. տրված մասնագիտական եզրակացությունը և հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, հանձնաժողովը որոշեց մասնակիցների որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/5» ծածկագրով ԲՄ ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակիցներ:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/5» ծածկագրով ԲՄ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ. Գևորգյան)

Հանձնաժողովը որոշեց հայտարարել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/5» ծածկագրով ԲՄ ընթացակարգի արդյունքները և հաստատել կնքվելիք պայմանագրի մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Հ. Մելիքյան
Գնահատող	Կ. Մխիթարյան
Գնահատող	Գ. Ուխտյան
Գնահատող	Ա. Մկրտչյան
Գնումները համակարգող	Գ. Գևորգյան